ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 36

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

23.02.2019թ. ք. Իջևան

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 26-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Ցուցուլյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի՝ 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատում:

   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյան/
2. ԵՊՀ ԻՄ–ի՝ 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկի հաստատում:

   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Ց. Դավթյան/
3. ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային փոփոխությունների մասին:

   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ա. Վ. Ցուցուլյան/
4. «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուի գործունեության մասին:

   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ա. Վ. Ցուցուլյան/
5. ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի կանոնադրության հաստատում /նոր խմբագրությամբ/

   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրաբյան/

6. ԵՊՀ ԻՄ-ի տնտեսական մասի կանոնադրության հաստատում /նոր խմբագրությամբ/

/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնտեսական մասի վարիչ Վ. Ս. Սարգսյան/

7. ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության կանոնադրության հաստատում /նոր խմբագրությամբ/

/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Ց. Դավթյան/

8. Ընթացիկ հարցեր:

8.1 ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի, «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Ա. Ամիրխանյանի դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու հարցը:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին</u>՝ «ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատումը›› հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղարի Մ. Ս. Աթոյանի հաղորդումը: Նշվեց, որ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացված 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի գիտխորհրդի ժամանակացույցի նախագիծը կազմված է հաշվի առնելով ԵՊՀ համապատասխան ժամանակացույցը և ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների ժամանակացույցները և առաջարկները, հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020թթ. ռազմավարական ծրագիրի ժամանակացույց պլանը:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը, ՈՒԻՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը և Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար(Ժ/Պ) Գ. Սիմոնյանը:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել գիտական խորհրդի 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ժամանակցույցը համաձայն հավելված 1-ի:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Որոշում 36/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ժամանակցույցը, համաձայն հավելված 1-ի:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ–ի 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկի հաստատումը›› հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԻՄՎ պետ Ա. Դավթյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում առկա են 12 անվանական կրթաթոշակներ, որոնցից 2-ը արտահամալսարանական ֆինանսավորման են (Վազգեն Սարգսյան և Մոնթե Մելքոնյան): Գիտական խորհրդի հաստատման ներկայացված 5 հավակնողների վերաբերյալ կան համապատասխան ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումները:

Հեռակա ուսուցման բաժնից առաջին անգամ կա անվանական կրթաթոշակի հավակնորդ՝ **«Հոգեբանություն»** մասնագիտության չորրորդ

կուրսի ուսանողուհի Նաիրա Մարատի Լազարյան, նա ունի ՄՈԳ-ով 3 (երեք) կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն:

Գիտխորհրդի հաստատմանն է ներկայացված.

1) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «**Պատմություն**» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի **Վանուհի Սամվելի Գևորգյանին՝ «Մխիթար Գոշ»** անվանական կրթաթոշակ՝ հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:
2) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի **Աստղիկ Արթուրի Ղազարյանին՝ «Գրիգոր Նարեկացի»** անվանական կրթաթոշակ՝ հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:
3) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի **Լիլիթ Արտակի Եգանյանին՝ «Շառլ Ազնավուր»** անվանական կրթաթոշակ՝ չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:
4) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի **Լիլիթ Արամի Ֆարմազյանին՝ «ԵՊՀ»** անվանական կրթաթոշակ՝ 5 (հինգ) կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու,

հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

5) Հեռակա ուսուցման բաժնի **«Հոգեբանություն»** մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի **Նաիրա Մարատի Լազարյանին՝ «Դավիթ Անհաղթ»** անվանական կրթաթոշակ՝ 3 (երեք) կիսամյակ ՄՈԳ-ով անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

Արտահայտվեցին – Տնօրեն Ա. Ցուցուլյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Գ. Հովհաննիսյանը : Նրանք մասնավորապես նշեցին, որ նշված ուսանողների հասարակական ակտիվությունը որոշվել է ըստ ֆակուլտետների ուսանողական խորհուրդների ներկայացման:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Որոշում 36/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «**Պատմություն**» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի **Վանուհի Սամվելի Գևորգյանին**՝ 2018–2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում (ս/թ մարտի 1-ից սկսած մինչև ուսումնառության ավարտը) նշանակել **«Մխիթար Գոշ»** անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

2) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի **Աստղիկ Արթուրի Ղազարյանին՝** 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել **«Գրիգոր Նարեկացի»** անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

3) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի **Լիլիթ Արտակի Եգանյանին՝** 2018–2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում (ս/թ մարտի 1-ից սկսած մինչև ուսումնառության ավարտը) նշանակել **«Շառլ Ազնավուր»** անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

4) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի **Լիլիթ Արամի Ֆարմազյանին՝** 2018–2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում (ս/թ մարտի 1-ից սկսած մինչև ուսումնառության ավարտը) նշանակել **«ԵՊՀ»** անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

5) Հեռակա ուսուցման բաժնի **«Հոգեբանություն»** մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի **Նաիրա Մարատի Լազարյանին՝** 2018–2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում (ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը) նշանակել **«Դավիթ Անհաղթ»**

անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

<u>Օրակարգի երրորդ՝</u> « ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային փոփոխությունների մասին›› հարցի վերաբերյալ լսեցին տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանի հաղորդումը: Նա նշեց, որ այս պահին Հումանիտար գիտությունների ֆակուլտետում գործում են օտար լեզուների հետ կապված երկու ամբիոն և մեկ սեկցիա՝ Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոն, Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն և Ռուսաց լեզվի և գրականության սեկցիա, մյուս կողմից այս մասնագիտություններով ուսանողների թիվը բավականին քիչ է և առաջարկում եմ միավորել Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնը Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնը և Ռուսերեն լեզվի և գրականության սեկցիան, դրանց հիմքի վրա ձևավորելով մեկ Օտար լեզուների ամբիոն:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը և Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի Ժ/Պ, դոցենտ Գ. Սիմոնյանը:

Մասնավորապես Գ. Սիմոնյանը հարցրեց թե քանի հաստիք ունեն բոլորը միասին, իսկ Ա. Դավթյանը նշեց, որ երեքը միասին բոլոր ժամանակներում ունեցել են 18-20 հաստիք:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ 36/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ տնօրենի ներկայացրած կառուցվածքային փոփոխություններին՝

Ա) Լուծարել Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնը,

Բ) Լուծարել Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնը,

Գ) Լուծարել Ռուսաց լեզվի և գրականության սեկցիան,

Դ) Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի, Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի և Ռուսաց լեզվի և գրականության սեկցիայի հիման վրա վերակազմակերպել մեկ՝ Օտար լեզուների ամբիոն:

2. ԵՊՀ ռեկտորին ներկայացնել համապատասխան առաջարկ:

Օրակարգի չորրորդ՝ «‹‹Ակունք›› գիտական հոդվածների ժողովածուի գործունեության մասին›› հարցի վերաբերյալ լսեցին տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանի հաղորդումը:

Նա նշեց, որ այս հարցի վերաբերյալ նախատեսվում էր լսել ‹‹Ակունք›› գիտական հոդվածների ժողովածուի գլխավոր խմբագիր, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանի հաղորդումը սակայն առողջական խնդիրների պատճառով նա չի ներկայացել նիստին և նրա նկատառումները կներկայացնի գիտքարտուղար Մ. Աթոյանը:

Մ. Աթոյանը նշեց, որ պրոֆեսոր Ա. Ներսիսյանը ուղարկել է իր նկատառումները այս հարցի վերաբերյալ և ներկայացրեց դրանք:

Նշվեց, որ մինչ այժմ այն հրատարակվել է որպես ժողովածու, այսուհետ պետք է հրատարակել որպես հանդես:

Իսկ չափորոշիչներում նորություններն են.

1. Ժողովածուն պետք է ունենա իր կայքը, ուր կներկայացվեն հանդեսի էթիկայի կանոնները, վճարովի է այն թե՝ ոչ, ինչպես նաև խմբագրական խորհրդի կազմը:

2. Պետք է հստակ մատնանշվի, թե քանի էջի սահմաններում է այն լինելու:
3. Պետք է տրվեն տեղեկություններ հեղինակների մասին:
4. Յուրաքանչյուր հոդված պետք է ունենա գրախոսություն կամ երաշխավորություն, որը պետք է պահվի արխիվում:
5. Կարող է այս ամենը զետեղվել մասնաճյուղի կայքում, բայց պետք է լրացուցիչ տեղ հատկացվի:
6. Կայքում տեղադրվելու է էլեկտրոնային տարբերակը, որը նախկինում էլ էինք անում:
7. Պետք է հստակեցվի՝ հանդեսը լինելու է գիտական, թե գիտամեթոդական: Երկուսը միատեղ չի կարելի:
8. Պետք է հստակեցվի, թե ինչ պարբերությամբ է տպվելու /կարծում եմ տարին երեք անգամը բավարար է/:

Այնուհետև նշվեց, քանի որ «Ակունքը» հանված է ԲՈԿ-ի ցանկից /ինչպես բազմաթիվ հանդեսներ և տարեգրքեր/, մինչև օրս տպագրության է ներկայացվել ընդամենը չորս հոդված, անհրաժեշտ է ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը մինչև հունիս առնվազն մեկ համար լույս ընծայելու համար:

Արտահայտվեցին – Ա. Ցուցուլյանը, Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Գ. Սիմոնյանը, Ա. Մակարյանը և այլոք:

Այնուհետև տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը ներկայացրեց ԲՈԿ –ի պահանջները.

1. Պարբերական գիտական հրատարակությունները /այսուհետև՝ պարբերական/ պետք է հրատարակվեն գիտական կենտրոնների կամ գիտական կազմակերպությունների, ինչպես նաև պետական կամ հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական /գիտատեխնիկական/ խորհուրդների երաշխավորությամբ:

2. Պարբերականը պետք է լինի գիտական կամ գիտամեթոդական, ունենա բովանդակության տարանջատում՝ ըստ մասնագիտությունների։

3. Պարբերականը պետք է ունենա տվյալ բնագավառի մասնագետների լայն ընդգրկումով խմբագրական խորհուրդ՝ ձևավորված առաջատար մասնագետներից։ Խմբագրակազմը իր գործունեությամբ պարտավոր է ապահովել պարբերականում հրապարակվող նյութերի գիտական նորույթը, նյութերում առկա փոխառված մտքերի ու պնդումների համար հղումների առկայությունը։

4. Պարբերական հրատարակությունում հրապարակվող նյութերը պետք է գրախոսվեն կամ երաշխավորված լինեն տպագրության։ Երաշխավորությամբ տպագրվող հոդվածի համար երաշխավորող մասնագետի անվան առկայությունը պարտադիր է։ Գրախոսականները կամ երաշխավորագրերը պետք է պահպանվեն խմբագրությունում /արխիվացվեն/, իսկ պահանջի դեպքում ներկայացվեն ԲՈԿ։

5. Պարբերականը պետք է ունենա որոշակիացված ծավալ և պարբերականություն՝ տարին առնվազն երկու համար, պետք է առաքվի Հայաստանի ազգային գրապալատ, Հայաստանի ազգային գրադարան, մասնագիտական և գիտական գրադարաններ։ Հավելվածները և լրացուցիչ թողարկումները չեն հավասարվում տվյալ պարբերականին։

6. Պարբերականը պետք է ունենա համացանցային կայք, որտեղ պետք է ընդգրկվի՝

ա) խմբագրակազմի անդամների մասին մանրամասն տեղեկատվություն՝ ներառյալ անդամների հետ կապ հաստատելու եղանակ (հեռախոս, էլ. փոստ, հաղորդագրության միջոց կամ հղում անձնական կայք էջին),

բ) պարբերականի վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, տպագրված

բոլոր նյութերի ամփոփագրերը (ռուսերեն կամ անգլերեն), հիմնաբառերը, հեղինակների մասին տվյալները,

գ) պարբերականի էթիկայի կանոնները, հոդվածի տպագրման վճարովի կամ անվճար հիմունքները, տպագրման համար պահանջվող վճարի չափը և գրախոսման կանոնները,

դ) ամբողջական արխիվը՝ սկսած 2013 թվականից, ավելի ուշ տպագրվողներինը՝ սկսած տպագրության թվականից,

ե) սեփական էլեկտրոնային փոստի հասցեն։

7. Պարբերականում պետք է նշվեն նյութերի ներկայացման, գրախոսման և տպագրության ընդունման ամսաթվերը։

8. Պարբերականը պետք է գրանցված լինի պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման /ISSN/ համակարգում և ունենա ISSN համարանիշ։

9. Պարբերականը վերը նշված պահանջները բավարարելու դեպքում դիմում է ՀՀ ԿԳՆ ԲՈԿ՝ համապատասխան ցուցակում ընդգրկվելու համար։ Ցուցակը պարբերաբար վերանայվում է։

10. “Web of science” կամ “Scopus” շտեմարաններում պարբերականի ընդգրկված լինելը նույնպես բավարար պայման է ԲՈԿ-ի ցուցակում ընգրկվելու համար։

Գ. Սիմոնյանը, Ա. Մակարյանը և Գ. Հովհաննիսյանը առաջարկեցին գրախոսությունների համար գրախոսներին վճարել 10 000 դրամ:

Առաջարկ եղավ նաև հրատարակել տարեկան 2 համար և ավճար դարձնել բոլորի համար, հաստատել խմբագրական խորհուրդի նոր կազմը և կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Որոշում 36/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի ‹‹Ակունք›› պարբերական գիտամեթոդական հրատարակության խմբագրության կանոնադրությունը››՝ համաձայն հավելված 2-ի։
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2010թ.-ի սեպտեմբերի 24-ի նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ-ի ‹‹Գիտական հոդվածների ժողովածու›› հանդեսի խմբագրության կանոնադրությունը:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Որոշում 36/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ‹‹Ակունք›› հանդեսը հրատարակել տարվա մեջ առնվազն 2 անգամ:

2. ‹‹Ակունք›› հանդեսի էջերի քանակը սահմանել 150-200 էջի սահմաններում:
3. ‹‹Ակունք›› հանդեսում հրատարակել գիտամեթոդական բնույթի հոդվածներ:
4. ‹‹Ակունք›› հանդեսում հրատարակվելը դարձնել անվճար:
5. ‹‹Ակունք›› հանդեսի հոդվածների գրախոսման համար սահմանել 10 000 դրամ վճար:
6. ‹‹Ակունք›› հանդեսի գլխավոր խմբագրի պաշտոնում նշանակել պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանին:
7. Հանձնարարել ‹‹Ակունք›› հանդեսի գլխավոր խմբագրի պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանին կազմակերպել ‹‹Ակունք›› հանդեսի հրատարակումը համաձայն ԲՈԿ-ի պահանջների:

<u>Օրակարգի հինգերորդ՝</u> «ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի կանոնադրության հաստատում /նոր խմբագրությամբ/›› հարցի վերաբերյալ լսեցին ՀՈԻԲ վարիչ Մ. Զուրաբյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի գործող կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել: Այն առավելապես պայմանավորված է ԵՊՀ-Ի իրավական կարգավիճակի փոփոխության հետ (այն դարձել է հիմնադրամ) և այս համատեքստում պետք է նրա կազմի մեջ մտնող ստորաբաժանումների կանոնադրությունը համահունչ դարձնել վերոհիշյալ կարգավիճակին: Հեռակա ուսուցման բաժնի գործող կանոնադրությունը հաստատվել է 2012թ. նոյեմբերի 10-ի գիտական խորհրդի նիստում և օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջացել կանոնադրության մեջ որոշ փոփոխություններ և լրացումներ կատարել, և այն

պայմանավորված է հեռակա ուսուցման արդյունավետության շարունակական բարձրացման նպատակադրումից: Ձեր հաստատմանը ներկայացվող կանոնադրության նախագծում առավել հստակեցվել և կոնկրետացվել են ՀՈՒԲ-Ի խնդիրներն ու գործառույթները, բաժնի վարիչի իրավասությունների և պարտավորությունների շրջանակը: Ի տարբերություն նախորդ կանոնադրության, այստեղ աշխատակիցների գործառույթները սահմանված են տվյալ հաստիքով նախատեսված պաշտոնի անձնագրերում:

Արտահայտվեցին – Ա. Ցուցուլյանը, Գ. Սիմոնյանը, Մ. Միքայելյանը, Կ. Պողոսյանը և այլոք: Մասնավորապես նշվեց, որ կան խմբագրական բացթողումներ և կարելի է որոշ կետեր ավելի հստակեցնել:

Տնօրեն Ա. Ցուցուլյանը առաջարկեց կազմել հանձնաժողով ԵՊՀ ԻՄ-ի իրավական ակտերի վերամշակման և փորձաքննության համար հետևյալ կազմով. Ա. Մակարյան, Մ. Աթոյան, Ն. Նազարյան, Ս. Գաբրիելյան, Ա. Մարգարյան, ՀՈՒԲ կանոնադրության հաստատումը քննարկել առաջիկա գիտական խորհրդի նիստում հանձնաժողովի կողմից վերանայելուց հետո:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Որոշում 36/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 14-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

կանոնակարգի 4-րդ կետի 14-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձնաժողովի փոփոխված կազմը համաձայն հավելված 3-ի:
2. Հանձնարարել հանձնաժողովին վերանայել ՀՈՒԲ կանոնադրությունը և ներկայացնել հաստատման առաջիկա գիտական խորհրդի նիստում:

<u>Օրակարգի վեցերորդ</u> ՝ « ԵՊՀ ԻՄ-ի տնտեսական մասի կանոնադրության հաստատում /նոր խմբագրությամբ/›› հարցի վերաբերյալ լսեցին Տնտեսական մասի վարիչ Վ. Սարգսյանի հաղորդումը: Նա նշեց, որ նախագիծը նախօրոք ուղարկվել է գիտական խորհրդի բոլոր անդամներին, նոր խմբագրությամբ աշխատել ենք առավել հստակեցնել ստորաբաժանման գործառույթները և կառուցվածքը:

Արտահայտվեցին – Գ. Սիմոնյանը, Մ. Ճաղարյանը, Գ. Հովհաննիսյանը, Կ. Պողոսյանը:

Մասնավորապես առաջարկվեց 1.5 կետը դարձնել 1.3, 2.1 կետի ա) և բ) ենթակետերը միավորել, ը) ենթակետում ավելացնել ‹‹գազի սպասարկումը›› արտահայտությունը:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Որոշում 36/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի տնտեսական մասի կանոնադրությունը /նոր խմբագրությամբ/ առաջարկված փոփոխություններով հանդերձ՝ համաձայն հավելված 4-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2014թ.-ի սեպտեմբերի 17-ի թիվ 5 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ-ի տնտեսական մասի կանոնադրությունը կանոնադրությունը

Օրակարգի յոթերորդ՝ « ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության կանոնադրության հաստատում /նոր խմբագրությամբ/» հարցի վերաբերյալ լսեցին ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի հաղորդումը: Նա նշեց, որ նախագիծը նախօրոք ուղարկվել է գիտական խորհրդի բոլոր անդամներին, նոր խմբագրությամբ աշխատել ենք առավել հստակեցնել ստորաբաժանման գործառույթները և կառուցվածքը:

Արտահայտվեցին – Գ. Սիմոնյանը, Մ. Ճաղարյանը, Գ. Հովհաննիսյանը, Կ. Պողոսյանը:

Նշվեց, որ կան մի շարք խմբագրական բացթողումներ և առաջարկվեց հարցը քննարկել նոր ձևավորված հանձնաժողովի եզրակացությունից հետո:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Որոշում 36/8

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հանձնարարել ԵՊՀ ԻՄ-ի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովին ուսումնասիրել և տալ եզրակացություն ՈՒՄՎ-ի կանոնադրության վերաբերյալ:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ-ի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արտակ Ամիրխանյանի դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի 2019թ. փետրվարի 18-ի թիվ 8 նիստում քննարկվել է նույն ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արտակ Ամիրխանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը, և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները՝ նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել են ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ տեխնիկական գիտությունների թեկնածու Արտակ Ամիրխանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Գիտքարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արտակ Ամիրխանյանը ԵՊՀ ԻՄ-ում աշխատում է

2016 թ.-ից սկսած՝ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Նա ունի գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքներ կատարելու անհրաժեշտ փորձ և արհեստավարժ է: Արտակ Ամիրխանյանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների միջին գնահատականը 4.92 է:

Արտակ Ամիրխանյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2015 թ.-ին: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո նա ունի 2 (երկու) հրատարակած գիտական հոդված և 1 (մեկ) ուսումնամեթոդական աշխատանք:

Նա, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. Ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ ԲՈՒՀ-ում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն», կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արտակ Ամիրխանյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը քվեարկության դրեց Արտակ Ամիրխանյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու և ԵՊՀ գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցը:

Բաց քվեարկությամբ, միաձայն (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ) ***որոշեցին.***

Որոշում 36/9

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու **Արտակ Ամիրխանյանի** գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի ‹‹Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին›› N 615 որոշման 2-րդ՝ ‹‹Դոցենտի գիտական կոչում շնորհելը›› բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արտակ Ամիրխանյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և

բնագիտության ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արտակ Ամիրխանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Գիտական խորհրդի նախագահ_____ Ա. Վ. Ցուցուլյան

Գիտքարտուղար_____Մ. Ս. Աթոյան

23.02.2019թ.